«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գոյականական անդամի լրացումների ուսուցման առանձնահատկությունները

Առարկա՝ Հայոց լեզու

Ուսուցիչ՝ Օվսաննա Հավանջյան

Դպրոց՝ Խ. Սամուելյանի անվան թիվ 47 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 7
ԴԱՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿ 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև:

Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթականդաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:[1]

Լեզվական նյութի դասավանդման արդյունավետությունն ապահովելու համար, քերականական գիտելիքներից բացի, ուսուցման ընթացքը պետք է պարունակի գործնական բնույթի վարժություններ, առաջադրանքներ, որոնք պետք է զարգացնեն սովորողների խոսքային և հաղորդակցական կարողությունները, բազմազան թեմաների շուրջ խոսք կազմելու հմտությունները: Օրինակ՝ քերականության ուսուցումը պետք է հանգեցվի ոչ թե քերականական կանոնները, սահմանումները անգիր անելուն, այլ քերականական ձևերը խոսքում ճիշտ և նպատակահարմար կիրառելուն:

Լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական առանցքը պարզ նախադասությունն է՝ իր գլխավոր ու երկրորդական անդամներով և մեկ ստորոգումով: Պարզ նախադասության հիմքի վրա են կառուցվում բարդ նախադասությունները՝ իրենց բաղադրիչ նախադասություններով և երկու կամ ավելի ստորոգումներով: Շարահյուսական գիտելիքները հիմնականում վերաբերում են նախադասությանը, «նրա տեսակներին, կետադրությանը, գլխավոր և երկրորդական անդամներին, բազմակի անդամներին, մեջբերվող խոսքին»:[2] Այս առումով խոսք կազմելու հմտություններ զարգացնելու գործում

[1] https://www.scribd.com/document/611831238/ՇԱԲԱԹ8/fbclid=IwAR2nhQODc8JBXTDhvNWYdvo0QJYnE01jZJzXiJsiYltDTr0g6-cPCokKGXw#

[2] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 1997, էջ 207:

կարևորվում է շարահյուսական գիտելիքների ուսուցումը, քանի որ շարահյուսությունը անմիջականորեն առնչվում է խոսքի կազմության և հաղորդակցության ապահովման հարցերին:

Աշխարհաբարի քերականության առաջին դպրոցական դասագիրքը Խաչատուր Աբովյանի «Նախաշավիղն» է: Տարիների ընթացքում հայերենի քերականական կանոնները հղկվել ու մշակվել էին: Դա հայերենի քերականության ամենակարևոր հատկանիշներից էր, որից Աբովյանն օգտվեց իր դասագիրքը կազմելիս: Քերականական պատմական զարգացումը ստեղծել էր նաև քերականության ուսուցման սխոլաստիկական համակարգ, դոգմատիկական մեթոդ, որից Աբովյանը կտրականապես հրաժարվեց: Աբովյանը քերականական ուսուցումը կենդանի ու հետաքրքիր դարձնելու համար ուսուցիչներին հանձնարարել է քերականական նյութի շարադրման եղանակներին զուգահեռ կատարել բազմազան բանավոր, գրավոր, դասարանային ու տնային վարժություններ: Աբովյանը տվել է քերականական ուսուցման այնպիսի սկզբունքներ ու մեթոդական եղանակներ, որոնք նորություն էին իր ժամանակի համար:[3]

Աբովյանից հետո Նալբանդյանն առաջինն էր, որ զբաղվում է հայ գրական լեզվի արմատական փոփոխություններով և նրա ուսուցման հարցերով: Բայի որոշ քերականական ձևերի քննությամբ Նալբանդյանը զբաղվում է Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի մասին իր քննադատական աշխատությունը գրելիս: Այդ աշխատության մեջ նա մի շարք բայաձևերի քերականական, ոճաբանական և ուղղագրական առանձնահատկությունների, դրանց շարահյուսական կիրառություններ վերաբերյալ կարևոր մեկնաբանություններ է տալիս:

Անցնելով տեսականից գործնականին՝ հետաքրքրական կլիներ ուսումնասիրել Ստեփան Պալասանյանի «Քերականություն մայրենի լեզվի» աշխատությունը, որն ըստ էության աշխարհաբար հայերենի նոր կազմավորվող քերականության հավաքագրման առաջին հաջողված փորձն էր՝ լեզվում խոսքի մասերի թեքման ձևերի ընդհանուր տենդենցների ուսումնասիրմամբ և համակարգմամբ:

Պալասանյանը քերականական յուրաքանչյուր կատեգորիայի վերաբերյալ նյութի շարադրանքից հետո դնում է հետաքրքրական ու բազմազան վարժություններ, որոնք ուսուցողական տեսակետից շատ կարևոր նշանակություն ունեն, և այս մեթոդն այսօր էլ կիրառվում է ուսումնական պրակտիկայում:

---

[3] Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1950, էջ 185:

Վերջին տարիներին զգալի աշխատանք է հայոց լեզվի ուսուցման դրվածքը բարելավելու ուղղությամբ, բայց, այնուամենայնիվ, առկա են թերություններ:
«Քերականական ուսուցումը պետք է ընթանա այնպիսի ուղիով, որ նրանում տեղ գտնեն հետևյալ մոմենտները՝ լեզվական իրակությունների գիտումը, ընկալումն ու իմաստավորումը, կանոնների բացահայտումն ու սահմանումների ձևակերպումը, դրանց ամրապնդումը, տնային աշխատանքի հանձնարարումը, կատարումը, ստուգումն ու ամփոփումը»:[4] Սակայն քերականության ուսուցումը կարելի է տանել նաև մեկ այլ ուղիով, այն է՝ դասը կիսել 2 մասի և սահմանումների և տեսական մասի բացատրությունից հետո նյութն ամրապնդել գործնական խաղերի և ինտերակտիվ գործիքների միջոցով:

Գոյականական անդամների ուսուցումը արդիական նշանակություն ունի, քանի որ նախադասությունը՝ իր լրացումներով, ընկած է շարահյուսության ուսուցման հիմքում: Մեր նպատակն է դիտարկել այն մեթոդներն ու ուղիները, որոնք հնարավորություն կտան առավել դյուրին ու ընկալելի դարձնելու գոյականական անդամների լրացումների ուսուցման գործընթացը: Այսպիսով՝ քերականական ուսուցման նշված ելակետերը հաշվի առնելով՝ հետազոտական աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրը՝ նախադասության երկրորդական անդամների, մասնավորապես գոյականական անդամի լրացումների ուսուցման հարցերը: Այս ուղղությամբ աշխատանքը կարևոր արժեք ունի, որովհետև թե՛ հնչյունաբանական, թե՛ ուղղագրական գիտելիքների յուրացումն ու դրանց ուղղությամբ ունակությունների ձևավորումը իրականացվում են շարահյուսական գիտելիքների հիման վրա:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քերականական գիտելիքների ուսուցումը, ինչպես նաև լեզվի ուսուցման հարցերն առհասարակ կարևոր տեղ են գրավում հանրակրթական դպրոցում, քանի որ, բացի համապատասխան գիտելիքներ տալուց, զարգացնում են սովորողների լեզվագործածության ունակությունները՝ հասարակական կյանքում լիարժեք հաղորդակցվելու նպատակով:

[4] Ջուհարյան Թ., Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956, էջ 104:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մեր ուսումնասիրության նպատակն է քննել գոյականական անդամի ուսուցման առանձնահատկությունները: Նշված նպատակից բխում են ուսումնասիրության հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել քերականության ուսուցման կարևորությունը,
- վեր հանել լրացումների ուսուցման առանձնահատկությունները,
- բացահայտել գոյականական անդամի լրացումների ուսուցման քայլաշարը,
- դասի օրինակով բացահայտել գոյականական անդամի լրացումների ուսուցման առանձնահատկությունները,
- վեր հանել դասավանդման այլընտրանքային մեթոդներ, որոնք թիրախային տարիքային խմբին կօգնեն Է՛լ ավելի կենտրոնանալ, այլ ոչ թե կորցնել դասի նպատակը գործնական խաղի ընթացքում:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Նախադասության գլխավոր անդամները ստորոգումային անդամներն են՝ ենթական և ստորոգյալը, որոնք կազմում են նախադասության միջուկը: Սրանցից յուրաքանչյուրն ունի իրեն լրացնող անդամները, և այդ անդամներով միասին կոչվում են ենթակայի բևեռ կամ ստորոգյալի բևեռ: Ըստ որում՝ լրացնող անդամները կոչվում են երկրորդական անդամներ, որոնք լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում, լրացնում են գլխավոր անդամների իմաստները:

Երկրորդական անդամները բաժանվում են երկու խմբի: Մի խումբը լրացնում է նախադասության՝ գոյականով արտահայտված ցանկացած անդամի և կոչվում գոյականական անդամի լրացումներ (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ): Մյուս խումբը լրացնում է խոնարհված բայ-ստորոգյալին կամ անկախ դերբայներին և կոչվում է բայական անդամի լրացումներ (խնդիրներ և պարագաներ):

Նախադասության կառուցվածքի մասին գաղափար տալու համար երեխաներին պետք է առաջարկել միանգամից երկու գործնական խաղ՝ ծրարներ և բերքահավաք: Լեզվական կանոնների ընկալման համար մեկ անգամ ևս պետք է կրկնել նախադասության սահմանումը: Նախադասության՝ միտք արտահայտելու գաղափարը ըմբռնել տալու համար պետք է օգտագործել խմբային աշխատանքի հնարը: Սկսում ենք Ծրարներ խաղը: Դասարանը պետք է բաժանել 4-5 խմբի, յուրաքանչյուր խմբում՝ 3-4 աշակերտ: Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկ ծրար, որի մեջ լցված են նախադասության բոլոր բառերը՝ առանձին-առանձին: Հանձնարարվում է ծրարի մեջ եղած բառերը խճանկարի նման դասավորել այնպես, որ ստացվի նախադասություն: Դրա համար երեխաներն իրենց սեղաններին շարում են բառերը: Խմբերն ուսուցչի հանձնարարությամբ բառերը վերադասավորում են այնպես, որ նախադասությունները ամբողջանան:

Նախադասության գլխավոր ու երկրորդական անդամների մասին գաղափար տալու համար երեխաներն իրենց կազմած յուրաքանչյուր նախադասությունից առանձնացնում են նրա բոլոր անդամները, ապա քննարկում են: Ուսուցիչը երեխաներին ուղղորդում է եզրակացնելու, որ նախադասության բոլոր անդամները բաժանվում են երկու խմբի՝ գլխավոր և երկրորդական:

Գոյականական անդամի լրացումները պարզաբանում են գոյականով և գոյականաբար գործածված այլ խոսքի մասերով հանդես եկող ոչ միայն ենթակաների, այլև

այլ անդամների (վերադիրներ, խնդիրներ և պարագաներ) որակական ու քանակական հատկանիշները, նրանց պատկանելությունը, սերումը, ծագումը, ինչպես նաև ավելի ստույգ են դարձնում, բացահայտում այդ անդամների էությունը, ով կամ ինչ լինելը: Այստեղ առաջարկվում է սկսել երկրորդ գործնական խաղը՝ բերքահավաքը: Գրատախտակին ուսուցիչը նկարում է մի ծառի բուն, որից երկու մեծ ճյուղ է արանձնանում: Ճյուղերից մեկի վրա գրվում է «Գոյական», մյուս ճյուղի վրա՝ «Բայ»: Այնուհետև ուսուցիչը կարդում է նախապես պատրաստած նախադասությունը, որի բոլոր բաղադրիչները գրվում են կպչուն թղթերի վրա՝ յուրաքանչյուր թղթին մեկ բառ: Գրատախտակին մոտեցող աշակերտն ընտրում է «զամբյուղից» մեկ «խնձոր» և փակցնում ծառի այն ճյուղին, որի լրացումն այն հանդիսանում է: Բոլոր բարիքների տեղադրումից հետո ուսուցիչը մատնացույց է անում, որ առանձնացված են գոյականական անդամի և բայական անդամի լրացումներ և որ դասը լինելու է գոյականական ճյուղի վերաբերյալ: Նույն ծառի վրա, խնձորիկները հեռացնելուց հետո, ուսուցիչը փակցնում է գոյականական անդամի լրացումների տեսակները՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ:

Որոշիչը ցույց է տալիս գոյականով արտահայտված անդամի հատկանիշը՝որակը, չափն ու քանակը, ինչին լինելը, ինչին վերաբերելը և այլն:

Իրենց արտահայտած իմաստին համապատասխան՝ որոշչի պաշտոնով ամենից առաջ հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը, այն է՝ ածականը, թվականը, դրանց հարաբերակից դերանունները, հարակատար, ենթակայական և ապառնի երկրորդ դերբայները և ապա գոյականի տարբեր հոլովական ձևերը, որոնք տվյալ դեպքում արտահայտում են հատկանշային նշանակություն:[5]

Որոշչի պաշտոնով ամենից առաջ հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը՝ ածականը, թվականը, սրանց հարաբերակից դերանունները (ցուցականների մեծ մասը, որոշյալ, անորոշ, հարցական և հարաբերական, ժխտական դերանունները), անորոշ դերբայի սեռական հոլովը, հարակատար ու ենթակայական դերբայները, ինչպես նաև գոյականն իր բոլոր հոլովաձևերով:

Գոյականական անդամի յուրաքանչյուր լրացում սովորեցնելիս անհրաժեշտ է վերցնել այնպիսի նախադասություն, որի մեջ լինի միմիայն այդ լրացումը: Օրինակ, եթե սովորեցնում ենք որոշիչը, նախադասության մեջ պետք է միայն որոշիչ լրացում լինի, ինչպես՝

[5] Վարդանյան Ա., Գոյականական անդամի լրացումների ուսուցումը, Երևան, 2012, էջ 10:

…Նա ընկերներից ստացել էր պեդանտ մականունը, այնուամենայնիվ, այդ բանից նա չէր վիրավորվում, քանի որ գիտեր, որ *անկարգ ու անկանոն* եղանակով ապրողները միշտ այդ անունով են մկրտում *կարգապահ* մարդկանց:

Սկզբում ընկերները, կարծես, չհասկացան *այդ* հայտարարության միտքը…

…և նայում էին իրար *հարցական* հայցքներով:[6]

Սովորաբար պետք է նախ այնպիսի նախադասություն վերցնել, որտեղ որոշիչը արտահայտված լինի ածականով, քանի որ դրանք են իսկական որոշիչները, թեև որոշիչը կարող է արտահայտվել նաև գոյականներով և այլ խոսքի մասերով, ուստի առաջին հերթին ածականներով արտահայտված որոշիչները պետք է սովորեցնել: Ածականի որոշչային կիրառությունը բխում է տվյալ խոսքի մասի իմաստային առանձնահատկություններից: Ածականը ցույց է տալիս առարկայի որպիսությունը, որակը, չափը, այստեղից էլ բխում է նրա կիրառությունը նախադասության մեջ: Ածականը հաճախ է հանդես գալիս որոշչային կիրառությամբ, ընդ որում՝ այդ պաշտոնում հանդես են գալիս, թե՛ որակական, թե՛ հարաբերական ածականները:

Յուրաքանչյուր որոշիչ սովորեցնելիս պետք է նշել, թե այն ինչ խոսքի մասով է արտահայտված: Դրա համար անհրաժեշտ է դիտարկել այնպիսի օրինակներ, որոնցում որոշիչ ցույց տվող բառը լինի հեշտությամբ որոշելի, թե որ խոսքի մասին է պատկանում: Երկվություն արտահայտող բառը կարող է շփոթ մտցնել, և պետք է խուսափել այդպիսի բառերից:[7] Աշակերտների ուշադրությունը պետք է բևեռել այն հանգամանքի վրա, որ հատկանշային իմաստ արտահայտող բառախմբերը և գոյականի ուղղական հոլովը որոշյալների հետ կապակցվում են ուղիղ ձևով, առանց քերականական փոփոխության, ապա գոյականների թեք հոլովները որոշչի դերում հանդես են գալիս կապակցության խնդրառական եղանակով:[8]

Աշակերտներին պետք է բացատրել, որ ածականով արտահայտված որոշիչները ցույց են տալիս որոշյալի՝ ա) որակական հատկանիշը, ինչպես օրինակ՝ «Նրա *հոյակապ* տները, որ *հպարտ* ճակատներով կանգնած էին քաղաքի կենտրոնական փողոցներում, մի-մի փուշ էին դարձել քաղաքացիների աչքում:», բ) չափը, քանակը, մեծությունը, ինչպես օրինակ՝ «Նրա *բազմաթիվ* հողերից բխող նավթը խեղդում էր և գործարանի ծուխը կուրացնում նրանց

---

[6] Մուրացան,Երկեր, Առաքյալը, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1980, էջ 9:
[7] Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954, էջ 380:
[8] Վարդանյան Ա., նույն տեղում:

աչքերը:», «Նրա մաքուր սափրված երեսը, դեմքի *խոշոր* գծերը, աչքերի սուր արտահայտությունը, *խիտ* հոնքերը և մանավանդ *թանձր* ու ալեխառն ընչացքը նիկողոսյան զինվորականի տպավորություն էին գործում:», գ) գույնը, համը, հոտը, օրինակ՝ «Նրանց զվարճության գլխավոր առարկան ադվակատ Մուխանն էր — *դեղնագույն*, ուռած քթով մի մարդ, որ կերակրի յուրաքանչյուր պատառը կուլ էր տալիս մերթ գինով, մերթ օղիով:», դ) ինչից լինելը կամ ինչին վերաբերելը և այլն, օրինակ՝ «*Քարե* պատերը շիկանում են կիզիչ ճառագայթներից, ավազը խանձվում է, օդը դառնում հեղձուցիչ»:[9]

Ճարահյուսական վարժությունների համար ամենատարբեր կառուցվածքների պարզ նախադասություններ պետք է վերցնել, որպեսզի աշակերները առիթ ունենան իրենց սովորածը լեզվական տարբեր նյութերի վրա փորձելու, քերականության ուսուցումը կապելու իսկական կենդանի լեզվի հետ և ոչ հատուկ ձևով կազմված քիչ գործածական ու արհեստական նախադասությունների հետ, որոնք լեզվական արժեքը շատ ցածր է:[10]

Դրանից հետո դժվար չէ եզրակացնել, որ նախադասության մեջ ամեն բառ իր որոշակի պաշտանն ու նշանակությունն ունի, իսկ հետո, դրանցից ելնելով, ձևակերպել հատկացուցչի քերականական կանոնը կամ պարզ սահմանումը, որ հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում, վերաբերում է մի այլ առարկա: Արտահայտվում է գոյականի, առարկայանիշ դերանվան, գոյականաբար գործածված բառերի սեռական հոլովաձևով: Հատկացուցիչն արտահայտում է ստացականության իմաստ, այսինքն՝ ցույց է տալիս այն առարկան, որը մի բան ունի, մի բանի տեր է՝ իբրև սեփականություն, հատկություն և այլն:

Սմբատը, զզվանքը զսպելով, շտապես *պատվավորների* սենյակը:[11]

Նախադասության անդամների հիմնական տարբերակումը աշակերտներին հասցնելու համար պետք է դիմել նախադասության անդամները միմյանց հետ համեմատելու և հակադրելու, համառոտելու և ընդարձակելու մեթոդական հնարին: Դրա համար անհրաժեշտ է վերցնել որևէ պարզ ընդարձակ նախադասություն, և նրա յուրաքանչյուր անդամը ջնջելու կամ բաց թողնելու և դատողությամբ նախադասության մեջ նրա տեղն ու կարևորությունը որոշելու միջոցով պարզել նրա գլխավոր կամ երկրորդական անդամ լինելը: Վերլուծված նախադասությունների տվյալները կարող ենք գրել գրատախտակին գծված

[9] Ծրվանզադե Ա., Քաոս,Երևան,
[10] Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 322:
[11] Ծրվանզադե Ա., Քաոս,Երևան,

աղյուսակում և նրա երկու սյունակների համամատության միջոցով պարզել երկրորդական անդամների արտահայտության միջոցները:

Հաջորդ լրացումը բացահայտիչն է: Դարձյալ օրինակներ բերելով՝ պետո է բացատրել, որ բացահայտիչ-բացահայտյալը առանձնահատուկ կառույց է, առանձնանում է անվանական լրացումների համակարգից: Բացահայտիչը նախադասության առարկա ցույց տվող անդամի կրկնությունն է մի այլ բառով, որը նույնպես առարկայի անուն է: Բացահայտչի պաշտոն են կատարում գոյականները, գոյականաբար գործածվող բառերն ու առարկայանիշ դերանունները, օրինակ՝ «Այրին դարձյալ դիմեց իր սովորական զենքի օգնությանը՝ թախանձանքներին ու աղերսներին», «Օ՛, ո՛չ, այդ չէ էականը, կընտելանա՞ արդյոք ինքը՝ Սմբատն իր կացությանը, նույնիսկ եթե կարողանա մոռացության տալ հոր անեծքը:»[12]

Նախադասության անդամների և նրանց տեսակների մասին ընդհանուր գաղափար տալուց հետո պետք է ձեռնամուխ լինել դրա ամրապնդմանը և նախադասության երկրորդական անդամների այդ երկու տեսակները գործնականորեն միմյանցից տարբերելու կարողության մշակմանը, որը հնարավոր կլինի իրագործել մարզողական, վերլուծական, կիրառական տարաբնույթ վարժությունների միջոցով: Գոյականական անդամի լրացումները տարբերակելու համար երեխաներին պետք է հանձնարարել ինչ-որ ստեղծագործությունից ընտրված նախադասություններից գտնել ու անջատել գոյականական անդամի լրացումները՝ դրանով իսկ արդեն նախադասության երկրորդական անդամներից մեկը զատելով և ուշադրության առարկա դարձնելով:[13]

Դիտարկենք նախադասությունները:

Գրիշան կարմիր, մսալի երեսով, հաստ շրթունքներով, վառվռուն սև աչքերով մի երիտասարդ էր: (ինչպիսի՞ երեսով, ինչպիսի՞ շրթունքներով, ինչպիսի՞ աչքերով):

Արեգակի շողերը խուրձերով ներս էին թափվել (Ինչի՞ շողերը):[14]

Այս և համանման այլ նախադասությունների շուրջ կատարված նախապատրաստական վարժություններից պարզ երևում է, որ ո՞ր հարցին պատասխանող անդամը որոշիչ է, իսկ ո՞ւմ հարցին պատասխանող բառը՝ հատկացուցիչ: Այստեղից էլ

[12] Շրվանզադե Ա., Քաոս,Երևան,
[13] Վարդանյան Ա., նույն տեղում:
[14] Շրվանզադե Ա., Քաոս,Երևան,

կարելի է եզրակացնել, որոշիչը հատկանիշ, քանակ է ցույց տալիս, հատկացուցիչը՝ պատակնելություն և այլն:

ԴԱՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿ

- Թեման՝ գոյականական անդամի լրացումներ
- Դասի տիպը՝ ամրապնդման դաս

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

- ամրապնդել քերականական նյութը,
- ուշադրությունը բևեռելով օրինակների վրա՝ ընդհանրացնել և կրկին բացատրել նախադասության երկրորդական անդամների, այս դեպքում՝ որոշչի, հատկացուցչի և բացահայտչի արտահայտման միջոցներն ու կիրառության առանձնահատկությունները,
- ուշադրություն դարձնել նաև նախադասության մեջ փոխաբերաբար գործածված անդամների արտահայտած գաղափարներին:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- նախադասության երկրորդական անդամների որոշում և տարբերակում,
- գոյականական անդամի լրացումների ուսուցում,
- համապատասխան երկրորդական անդամներով նախադասություններ կազմելու կարողությունների զարգացում:

ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կոլեկտիվ - համագործակցային, ինչպես նաև ուսուցման ակտիվ կամ փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների և հնարների (պրոբլեմային հարց, խմբային աշխատանք քարտերով, հարցման հետազոտական աղյուսակ) կիրառում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Դասագիրք, նաև ուսումնաօժանդակ այլ նյութեր, դիդակտիկ պարագաներ:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1. Դասի կառավարում, անհրաժեշտ պարագաների պատրաստում, նախապատրաստական զրույց: Նշում ենք օրվա դասի թեման և նպատակը: Անցկացնում ենք նյութի վերաբերյալ լեզվական գիտելիքների ամփոփում՝ հարց ու պատասխանի միջոցով: Գեղարվեստական գրականությունից օրինակների ընթերցումը կատարվում է ամբողջական, դերերով և շարունակելով:
2. Դասագրքից դուրս են բերվում որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ ունեցող նախադասություններ:
3. Իմաստի ընկալման փուլ: Ուսուցիչը սկսում է նյութի հաղորդումը: Սովորողներին հակիրճ ներկայացնում է նախադասության անդամների տարբերակումը: Այնուհետև խոսելով երկրորդական անդամների մասին՝ առանձնացնում է որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ լարոցումները: Գեղարվեստական գրականությունից դուրս բերված օրինակներով բացատրում է գոյականական անդամի լրացումների արտահայտման միջոցները:
4. Ինտերակտիվ մեթոդները օգնությամբ կազմակերպվում է խմբային աշխատանք:
   - Խմբային աշխատանք 1. «ծրարներ» խաղի օգնությամբ նախադասության անդամների տեղակայումն ենք ամրապնդում:
   - Խմբային աշխատանք 2. «բերքահավաք» խաղի օգնությամբ նախադասության անդամները գոյականական կամ բայական անդամների «ճամբարների» ենք բաժանում:
5. Գոյականական «ճամբարի» 3 լրացումների ներկայացում, օրինակների քննարկում, յուրաքանչյուր տեսակի համառոտ ներկայացում:
6. Հարցերի միջոցով ուսուցիչը պետք է պարզի դասի թերություններն ու առավելությունները: Գնահատումը պետք է կատարել ըստ խմբային և անհատական ցուցանիշների:

Ամբողջ դասի ընթացքում համեմատություններ են անցկացվում անցած և նոր դասերի միջև, և ամբողջացվում են գիտելիքները: Ուսուցիչը համեմատություններ է անցկացնում նախադասության երկրորդական անդամների միջև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոյականական անդամների լրացումների ուսուցումը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1. Նախքան նախադասության երկրորդական անդամների ուսուցմանն անցնելը պետք է նախ աշակերտների ուշադրությունը բևեռել նախադասության կառուցվածքի վրա ընդհանրապես, ցույց տալ, որ տարբեր նախադասություններ տարբեր կառուցվածք կարող են ունենալ: Նախադասության երկրորդական անդամների ուսուցման ժամանակ կիրառվող համեմատական, փոխներգործուն մեթոդների օգնությամբ պարզ ընդարձակ կամ պարզ համառոտ նախադասություններից հարցերի միջոցով տարանջատել նախադասության գլխավոր անդամները և բացատրել՝ ի՞նչ հարցերի են պատասխանում և ի՞նչ են ցույց տալիս:
2. Գոյականական անդամի յուրաքանչյուր լրացում սովորեցնելիս անհրաժեշտ է նախ վերցնել մի այնպիսի նախադասություն, որի մեջ լինի միայն այդ լրացումը: Այնուհետև աստիճանական սկզբունքով կարելի է ընդարձակի նախադասությունները վերլուծության ենթարկել՝ համեմատելով ու հակադրելով նախադասության երկրորդական անդամները: Վարժություններից օգտակար ու արդյունավետ պետք է համարել հատկապես կիրառական վարժությունները՝ ինքնուրույն կերպով տարբեր բառաքանակի նախադասություններ կազմելու, պատրաստի նախադասությունները համառոտելու, ընդարձակելու առաջադրանքներով, որոնք նպաստում են նախադասություն կազմելու կարողության զարգացմանը և նախադասության հասկացողության ընդարձակմանը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1950:
3. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975:
4. Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Շարահյուսություն (հանրակրթ. դպրոցի 7-8-րդ դասարանների համար), Երևան, 1997:
5. Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Շարահյուսություն (ձեռնարկ), Երևան, 2012:
6. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 1997:
7. Գյուլբուդաղյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Երևան, 1988:
8. Հայոց լեզու, գրականություն» ուսումնական բնագավառի առարկայական ծրագրեր
9. Ղարիբյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1964:
10. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954:
11. Մուրացան,Երկեր, Առաքյալը, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1980:
12. Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1949:
13. Ծիրվանզադե Ա., Քառս, Երևան,
14. Ջուհարյան Թ., Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956:
15. Վարդանյան Ա., Գոյականական անդամի լրացումների ուսուցումը, Երևան, 2012:
16. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
17. Պալասանեան, Ստ. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, Թիֆլիս, 1869, հ. 1:
18. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:
19. https://www.scribd.com/document/611831238/ՇԱԲԱԹ-8?fbclid=IwAR2nhQODc8JBXTDhvNWYdvo0QJYnE01jZJzXiJsiYltDTr0g6-cPCokKGXw